ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու (3 դասաժամ), ֆիզիկա(8 դասաժամ), տեխնոլոգիա (3 դասաժամ), կերպարվեստ (2 դասաժամ) և ԹԳՀԳ (1 դասաժամ), առարկաների համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն(Ձև4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավասատգրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար ՝ 3-4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկով:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի հոկտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 2-ին՝ ժամը 14.00- ին, ՀՀ Արմավիրի մարզի Հայկավանի միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ Արմավիրի մարզ, գյուղ Հայկավան, 29 փողոց, 22 շենք
էլ. հասցե՝ haykavanimijnakargdproc@mail.ru
Բջջ. հեռախոսահամար՝ (094)33-10-04